ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1958 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սովետական իշխանության տարիներին մեր ռեսպուբլիկայում լույս են տեսել մեծ թվով տնտեսագիտական բնույթի աշխատություններ։ Դրանցից շատերը մեր ռեսպուբլիկայի էկոնոմիկայի պատմությանն ու առօրյային, նրա առանձին բնագավառներին նվիրված արժեքավոր ուսումնասիրություններ են։ Սակայն, պետք է խոստովանել, որ մինչև օրս էլ կան ժողովրդական տնտեսության այնպիսի բնագավառներ, որոնք տնտեսագիտական լուրջ ուսումնասիրության չեն ենթարկված։

Մինչև վերջերս այդպիսի մի բնագավառ էր նաև սպառողական կոոպերացիան։ Եվ իրոք, մինչև Գ. Կարագյանի աշխատությունը[1] լույս ընծայումը մենք չենք ունեցել Հայաստանի սպառողական կոոպերացիայի պատմության և զարգացման վերաբերյալ մի որևէ լուրջ գիտական աշխատանք։

Ժողովրդական տնտեսության այդ կարևոր բնագավառներից մեկի երկարամյա գործունեության արդյունքներն ու ձեռք բերած նվաճումները մնում էին անհայտ ոչ միայն ընթերցողների լայն շրջանի, այլ նույնիսկ սպառողական կոոպերացիայի մեծաթիվ աշխատողների համար։

Գ. Կարագյանի աշխատությունը, իրավամբ, լրացնում է ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության պատմության բնագավառի բաց տեղերից մեկը և ունի գործնական լուրջ նշանակություն, հատկապես սպառողական կոոպերացիայի աշխատողների համար։

Հեղինակը կատարել է երկարամյա և քրտնաջան աշխատանք։ Բարձրացրել է հսկայական արխիվային նյութեր, հանգամանորեն մշակել և սիստեմատիզացիայի է ենթարկել այդ նյութերը և գիտական բարեխղճությամբ, մեթոդոլոգիական ճիշտ դիրքերից շարադրել այն։

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է երկու մեծ բաժիններից։ Առաջին բաժնում հետազոտված է սպառողական կոոպերացիայի ծագումն ու զարգացումը նախասովետական Հայաստանում, իսկ երկրորդ բաժնում՝ նրա զարգացումն ու գործունեությունը Սովետական Հայաստանում։

Առաջին բաժնի առաջին գլուխը նվիրված է կոոպերացիայի մասին տնտեսագիտական մտքի զարգացման պատմությանը, որտեղ համառոտ, բայց բավականին հաջող շարադրված է կոոպերացիայի էությունը։ Հեղինակն այստեղ առանձնապես կանգ է առել կոոպերացիայի հարցերում մենշևիկների, էսեռների և անարխիստների սխալ տեսակետների վրա, որոնք փորձում էին

[1] Կ. Գ. Կարագյան, Սպառողական կոոպերացիայի ծագումը և զարգացումը Հայաստանում. 1937 էջ, 4։51։ Գիտական համալսարանի հրատարակչություն։

կոոպերատիվ շարժումը հակադրել պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարին, վերջինիս անհրաժեշտությունը ժխտելու նպատակով։

Տալով սպառողական կոոպերացիայի էության մարքս-լենինյան բնութագրությունը, նշելով կոոպերացիայի օգտակարությունը, հեղինակը միաժամանակ ընդգծում է, որ «Կապիտալիզմի պայմաններում չափից դուրս սահմանափակված է այդ օգտակարության աստիճանը, ... նրանք գործողության լայն ասպարեզ կստանան և լուրջ ու վճռական փոփոխություն առաջ կբերեն պրոլետարիատի կողմից իշխանությունը գրավելուց հետո միայն» (էջ 16)։

Հեղինակն այստեղ մարտնչում է մինչև ռևոլյուցիան եղած և ռևոլյուցիայից հետո ծավալվող կոոպերացիայի մեջ տարբերազուրկ բովանդակություն դնելու փորձերի դեմ և ցույց է տալիս, որ մինչռևոլյուցիոն շրջանի սպառողական կոոպերացիան «պետք է ենթարկված լինի պրոլետարիատի դիկտատուրայի նվաճման հիմնական նպատակակետին, այլապես նա կարող է կտրվել իշխանության նվաճման համար մղվող քաղաքական պայքարից և կարող է շեղել բանվորներին ռևոլյուցիոն պայքարի ճանապարհից» (էջ 16)։

Մարքս-լենինյան այս հանրահայտ ճշմարտության հաճախ կրկնումը նույնիսկ այժմ էլ անհրաժեշտ է, քանի որ դեռ գտնվում են ու կան մարդիկ, որոնք կարծում են, թե հնարավոր է կոոպերացիայի միջոցով կամ այլ ֆանտաստիկ ճանապարհներով կապիտալիզմի խաղաղ վերափոխումը սոցիալիզմի։

Առաջին բաժնի երկրորդ գլխում հետազոտվում են կոոպերացիայի առաջացման սոցիալ-տնտեսական պայմանները հայ իրականության մեջ։

Հեղինակին հաջողվել է ընդհանուր տնտեսական զարգացման ֆոնի վրա ցույց տալ կոոպերացիայի ծագման նախադրյալները Հայաստանում XIX դարի վերջում և XX դարի սկզբներին՝ կապելով այն կապիտալիզմի զարգացման հետ Հայաստանում։

Այստեղ առաջին անգամ ուսումնասիրվում է հայ սոցիալ-դեմոկրատների միության դիրքորոշումը կոոպերատիվ շարժման հարցում, ցույց է տրվում հայ բոլշևիկյան մամուլի, Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի կողմից տրված գնահատականը սպառողական կոոպերացիայի էության մասին։

Առաջին բաժնի հետագա գլուխներում մանրամասնորեն շարադրված են Հայաստանում առաջին կոոպերատիվ ընկերությունների՝ Երևանի, Մեղրիի, Ջարխեչի, Էջմիածնի կազմակերպման պատմությունը և նրանց գործունեությունը։ Բերված են հետաքրքիր արխիվային փաստաթղթեր, որոնք վերաբերում են այդ կոոպերատիվ ընկերությունների կազմակերպչական և տնտեսական կապերին սպառողական ընկերությունների Մոսկովյան միության հետ։

Առաջին բաժնի եզրափակող գլուխը նվիրված է Հայաստանի սպառողական կոոպերացիայի գործունեությանը համաշխարհային պատերազմի և ապա դաշնակցության տխրահռչակ տիրապետության տարիներին։ Փաստերի ու տվյալների հիման վրա ցույց է տրված, թե ինչպես երկրի ամբողջ էկոնոմիկայի քայքայման հետ միասին կազմալուծվում է նաև սպառողական կոոպերացիայի գործունեությունը, թե ինչպես այլասերվում է կոոպերացիան և ամբողջովին կորցնում իր դեմոկրատական սկզբունքները։

Սպառողական կոոպերացիայի Սովետական շրջանին վերաբերող երկրորդ բաժինը ևս շարադրված է փաստական հարուստ նյութերի և դրանք տնտեսագիտական ճիշտ վերլուծության ենթարկելու հիման վրա։

Այստեղ Հայաստանի սպառողական կոոպերացիայի գործունեությունը քննված է ըստ սոցիալիստական շինարարության զարգացման էտապների, ներառյալ հինգերորդ հնգամյակը։

Աշխատության այս հատվածում անպայմանորեն արժեքավոր պետք է համարել այն, որ սպառողական կոոպերացիայի զարգացումը քննված է ռեսպուբլիկայի ամբողջ էկոնոմիկայի զարգացման հետ սերտորեն կապված։ Նման մոտեցումն հնարավորություն է տալիս հետևելու սպառողական կոոպերացիայի աստիճանական զարգացմանը՝ երկրի էկոնոմիկայի բուռն վերելքին զուգընթաց և ճիշտ հասկանալու սպառողական կոոպերացիայի կարևոր դերը ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության ընդհանուր զարգացման մեջ։

Ինչպես առանձին գլուխներում, այնպես էլ աշխատանքի վերջում զետեղված մոտ հարյուր վերլուծական աղյուսակներում բերված են Հայկոոպի տնտեսական-ֆինանսական գործունեության հիմնական ցուցանիշները՝ սկսած 1921 մինչև 1935 թ. ներառյալ։ Այդ տվյալներից որոշակիորեն երևում են Հայկոոպի սիստեմի ձևաք բերած նվաճումները ապրանքաշրջանառության, գյուղատնտեսական մթերքների և հումքի մթերումների ու գնումների, ֆինանսական, տնտեսական և կազմակերպչական ամրապնդման բնագավառում։

Աշխատությունում վերլուծված են ոչ միայն սպառողական կոոպերացիայի նվաճումները, այլև նրա մի շարք խոշոր թերությունները ըստ առանձին էտապների։

Այս է գրախոսվող աշխատության հիմնական կոմպոզիցիան և նրա արժանիքները։

Աշխատությունը, մեր կարծիքով, զուրկ չէ նաև թերություններից։

Հեղինակը ուշադրություն չի դարձրել աշխատության երկու բաժինների միջև ճիշտ համամասնություն ստեղծելու վրա։ Աշխատության կեսից ավելի մասը նվիրված է նախահեղափոխական Հայաստանի սպառողական կոոպերացիայի ուսումնասիրությանը։

Անհրաժեշտ էր երկրորդ բաժնին ավելի մեծ տեղ հատկացնել և ավելի հանգամանորեն քննել սպառողական կոոպերացիայի գործունեությունը Սովետական Հայաստանում։

Առաջին բաժնի 3-6-րդ գլուխներում հեղինակը չափից ավելի է տարվել առանձին կոոպերատորների կենսագրական տվյալներով, որի պատճառով նյութի վերլուծական կողմը, երևույթների բացահայտման ու մեկնաբանման կողմը մնացել է նրանց կենսագրական մանրամասնությունների ստվերում։

Նշված գլուխները ծանրաբեռնված են երկրորդական նշանակություն ունեցող հարցերի ուսումնասիրությամբ, դեպքերի նկարագրական ավելորդ մանրամասնություններով, ոչ տեղին բերված մի շարք փաստաթղթերի լուսանկարներով և երբեմն էլ նյութի հետ կապ չունեցող ավելորդություններով։

Աշխատության մեջ հեղինակը խոսում է կոոպերացիայի վերաբերյալ այս կամ այն տեղեկությունը հաղորդող մեծ թվով մարդկանց մասին, ցույց տալով նրանց անունը, հայրանունը, ազգանունը ծննդավայրը և նույնիսկ չի պլանում հայտնել, թե ինքը նրանցից ինչ տեղեկություն, կամ վկայություն, որտեղ և ինչ ձևով է ստացել «նամակագրությամբ», թե «զրույցի ժամանակ»։ Օրինակ՝ 210-րդ էջում կարդում ենք. «Ղափանի բնակիչ, փականագործ, 1903 թվականից գործարանատեր Կոնդուրովի պղնձաձուլարանի բանվոր Արսեն Առաքելի Մանգասարյանից նամակագրությամբ տեղեկացանք, որ XX դարի

առաջին տասնամյակում «Լոփանում կոոպերատիվ չի եղել» կամ 214-րդ էջում գրված է, որ այդ ժամանակաշրջանում կոոպերատիվ չի եղել նաև Ալավերդու պղնձահանքերում և ձուլարանում։ «Այդ մասին մենք տեղեկություններ ստացանք Ալավերդում, հնագույն բանվոր Իսահակ Ալեքսանի Պապոյանի հետ 1937 թվականի մայիսին ունեցած դրույցի ժամանակ»։

Ակնհայտ է, որ այս երկար մտքերից կոոպերացիայի պատմության մեջ պետք է արտացոլվի միայն մի քանի բառեր, որ կոոպերացիայի պատմության մեջ չի կարելի արձանագրել այդպիսի տեղեկություններ հաղորդողների կենսագրությունները։

Հավասարապես կոոպերացիայի պատմությանը չի վերաբերում նաև այն, թե աշխատության հեղինակ ընկեր Կարագյանը տեղեկությունները ի՞նչ ձևով, ի՞նչ պարագաներում է ստացել։ Հասկանալի է, որ այս ավելորդությունները ձգձգում են շարադրանքը և իջեցնում նրա արժանիքները։

Աշխատությունը, անկասկած, կշահեր, եթե հեղինակը ավելի մանրամասն վերլուծեր Հալկոոպի սիստեմի գործունեության մի քանի կարևոր ցուցանիշները, հատկապես ապրանքային ֆոնդերի վերլուծման հարցերը՝ կապված ապրանքաշրջանառության աճի հետ։

Պետք էր հանգամանորեն ցույց տալ ապրանքային ֆոնդերի աճը ցուցում՝ կապված կոլտնտեսականների կենսապայմանների բարելավման հետ. վեր հանել ապրանքաշրջանառության վերելքը՝ կապված բնակչության գնողունակության բարձրացման հետ։

Երկար տարիներ Հալկոոպի սիստեմում աշխատելու հանգամանքը հեղինակին լիովին հնարավորություն էր ընձեռում ավելի խոր կերպով վերլուծելու Հալկոոպի աշխատանքներում եղած թերությունները՝ հասարակական սննդի գծով, գյուղատնտեսական մթերքների մշակման և ընդհանրապես արտադրական գործունեության գծով, ցույց տալ այդ թերությունները վերացնելու կոնկրետ ուղիներն ու հնարավորությունները։

Վերջերս, Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի գիտական խորհուրդը իր ընդլայնված նիստում լայն քննարկման դրեց գրախոսվող աշխատությունը։

Գիտական խորհրդի անդամներից և ֆակուլտետի պրոֆեսորա-դասախոսական կազմից բացի, գրքի երկու օր տևող քննարկմանը մասնակցեցին նաև հին կոոպերատորներ և Հալկոոպի բազմաթիվ աշխատողներ։

Բոլոր ելույթ ունեցողները, նշելով քննարկվող գրքի առանձին թերությունները, ընդգծեցին, որ այն հանդիսանում է Հայաստանի սպառողական կոոպերացիայի ծագմանն ու զարգացմանը նվիրված առաջին մեծածավալ մենագրական ուսումնասիրությունը, որի հեղինակը կատարել է անհրաժեշտ և օգտակար աշխատանք։

Մեր կարծիքն այն է, որ գրքում եղած թերությունները հեշտությամբ ուղղելի թերություններ են, որոնց վրա հեղինակը պետք է հետագայում ուշադրություն դարձնի։

Գիրքը գրված է սահուն և գեղեցիկ լեզվով և ընթերցվում է չձանձրացող հետաքրքրությամբ։

Ղ. ՇԱՀԱՐՅԱՆ
Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ